ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

« 15 » 06 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000045

Ձեռնարկողը՝ ***«Արտքոմփանի» ՍՊԸ***
Ք. Երևան, Պռոշյան 2/1

Գործունեությունը՝ ***Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի 15 /Հասրաթյան/ հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000045

<15> 06 2020թ.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի 15 /Հասարության/ հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Արտքոմփանի» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան

«Արտքոմփանի» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի 15 հողամասում կառուցել բազմաբնակարան բարձրահարկ շենքերի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.018հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքում առկա են քանդման ենթակա շինություններ, տարածքը ամբողջությամբ ասֆալտապատ է, բուսականությունը բացակայում է: Հարևանությամբ բնակելի և հասարակական շենքեր և շինություններ են:

Մինչև 30մ խորության վրա գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Տարածքում պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Նախատեսվում է կառուցել երեք մասնաշենք, որոնք կազմված կլինեն երկու ստորգետնյա և 14 վերգետնյա հասարակական և բնակելի նշանակության հարկերից: Ստորգետնյա հարկում նախատեսվում է 114 մեքենայի համար ավտոկայանատեղի, էլեկտրավահանակ և օժանդակ սենքեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառույցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 1.018հա

Կառուցապատման մակերես – 2.044քմ

Սալապատման մակերես – 924,4քմ

Ճանապարհներ – 2.546,9քմ

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Կանաչապատման մակերես – 4.664,3քմ:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու ջրի, էլեկտրաէներգիայի և գազի միացումներով և հաշվիչներով:

Բազմահարկ բնակելի համալիրի էլեկտրամատակարարման համար կառուցապատողը կդիմի «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Տեխնիկական պայմաններ ստանալուց հետո կիրականացվի էլեկտրական ցանցին միացման պատվեր՝ համաձայն ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջների:

Գազամատակարարումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Գործունեության ենթակա տարածքում առկա են ջրամատակարարման խողովակները, ինչը հաշվի է առնված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանում: «Արտքոմփանի» ՍՊ ընկերությունը նախատեսել է համապատասխան միջոցառումներ՝ շինարարության ընթացքում ջրամատակարարման խողովակների անխափան աշխատանքի ապահովմանն ուղղված:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 36 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության համար ջրամատակարարումը կիրականացվի համայնքային ջրատարից՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալուց հետո: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (152 մարդ) և կազմել 4.006,8մ^3/շին.ժամ կամ 3.71մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 337,5մ^3/շին.ժամ կամ 0.75մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4.344,3մ^3/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 50.750մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 31.150մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 19.600մ^3 կօգտագործվի որպես հետլիցք:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային աղբն է՝ 1.200-1.300կգ և շինարարական աղբը՝ 3.956մ^3: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

– ջրցանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

– շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում

սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավում,

– օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

– աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

– ծածկված թափքերով բեռնատարներով գրունտի և սորուն նյութերի տեղափոխում (ավազ, խիճ, հող և այլն),

– փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինհրապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

– շինարարական նյութերը տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

– մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

– տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերի ուղորդում պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվելու է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ,

–աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

–կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1.050.000 հազ. դրամ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Ըստ կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են հետևյալ ծառատեսակները՝ հուդայածառ՝ 6հատ, ձիակասկ՝ 10հատ, սիրիական վարդ՝ 25հատ, սովորական եղևնի՝ 24հատ, ասպիրակ՝ 29հատ, գնդաձև սամշիտ՝ 28հատ, գնդաձև ակացիա՝ 17հատ, դրախտածառ՝ 22հատ, կաղնի՝ 40հատ, սյունաձև թույա՝ 28հատ, մակարոնածառ՝ 16հատ, սամշիտ՝ 720գմ, ծաղկանոց՝ 31,5քմ, սիզամարգ՝ 4.054քմ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում կլինեն կաթիլային ոռոգման հանգույցներ, նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգումը կազմակերպելու համար:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արևմտյան վարչական շրջանի Լենինականի /Հասարության/ 15 հասցեում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական

աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել տարածքով անցնող ջրամատակարարման խողովակի անխափան աշխատանքը՝ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արտքոմփանի» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի /Հասրաթյան/ 15 հողամասում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Ալեքսանյան